

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետի
գիտական խորհրդի 11.11.20թ. հեռավար կարգով անցկացված թիվ 4.20-21 նիստի

Ներկա էին՝ Ֆիզիկայի ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի 36 անդամներից 32-ը:

Հաստատվեց հետևյալ օրակարգը՝

1. ԵՊՀ գիտխորհրդի անդամների թեկնածուների քվեարկություն
2. Կրթական ծրագրերում դասավանդող դասախոսական կազմին ներկայացվող պահանջների հաստատման հարցը:
3. Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթին մասնակցության հարցը:
4. Հեռակա ասպիրանտների ատեստավորման հաստատում

Լսեցին Ֆիզիկայի ֆակուլտետի ԵՊՀ գիտական խորհրդի անդամների ընտրության հարցը:

Ելույթ ունեցավ ֆակուլտետի դեկան Ռ. Հակոբյանը, ով ներկայացրեց ամբիոնների կողմից առաջարկվող թեկնածուներին:

Որոշեցին քվեարկության արդյունքում ԵՊՀ գիտական խորհրդի անդամ ընտրվեց ակադեմիկոս Գ. Սահակյանի անվան տեսական ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր Արամ Ազատի Սահարյանը:

Լսեցին – Կրթական ծրագրերի ղեկավարներին, ովքեր ներկայացրեցին դասավանդող դասախոսական կազմին ներկայացվող պահանջները:

Որոշեցին – Հաստատել առաջարկված դասախոսական կազմին ներկայացվող պահանջները:

Լսեցին – ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող Հրաչյա Հայկի Ասատրյանի՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթին մասնակցության հարցը:

Որոշեցին – Հաշվի առնելով Հ. Ասատրյանի բարձր առաջադիմությունը և նրա ակտիվ մասնակցությունը ֆակուլտետի հասարակական կյանքին՝ երաշխավորել Հրաչյա Հայկի Ասատրյանի հայտը վերոհիշյալ մրցույթին մասնակցության համար:

Լսեցին – ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանող Մհեր Հրաչյայի Խաչատրյանի՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթին մասնակցության հարցը:

Որոշեցին – Հաշվի առնելով Մ. Խաչատրյանի բարձր առաջադիմությունը և նրա ակտիվ մասնակցությունը ֆակուլտետի հասարակական կյանքին՝ երաշխավորել Մհեր Հրաչյայի Խաչատրյանի հայտը վերոհիշյալ մրցույթին մասնակցության համար:

Լսեցին – ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի մագիստրատուրայի 2- կուրսի ուսանողուհի Անի Գրիգորի Ուգուջանի՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթին մասնակցության հարցը:

Որոշեցին – Հաշվի առնելով Ա. Ուգուջանի բարձր առաջադիմությունը և նրա ակտիվ մասնակցությունը ֆակուլտետի հասարակական կյանքին՝ երաշխավորել Անի Գրիգորի Ուգուջանի հայտը վերոհիշյալ մրցույթին մասնակցության համար:

Լսեցին – ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի մագիստրատուրայի 2-ին կուրսի ուսանող Ալեքսանդր Արմենի Հայրապետյանի՝ Հայաստանի Հանրապետության

բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթին մասնակցության հարցը:

Որոշեցին – Հաշվի առնելով Ա. Հայրապետյանի բարձր առաջադիմությունը և նրա ակտիվ մասնակցությունը ֆակուլտետի հասարակական կյանքին՝ երաշխավորել Ալեքսանդր Արմենի Հյրապետյանի հայտը վերոհիշյալ մրցույթին մասնակցության համար:

Լսեցին. Միջուկային ֆիզիկայի ամբիոնի ուսումնառության 4-րդ տարվա հեռակա ասպիրանտ Էլմիրա Արայիկի Մելյանի ատեստավորման հարցը:

Ելույթ ունեցավ Միջուկային ֆիզիկայի ամբիոնի վարիչ Ա. Բալաբեկայնը նշեց, որ ասպիրանտը մասնակցել է որակավորման պարտադիր և ընտրովի դասընթացներին, հանձնել է ստուգարքներ: Ունի տպագրված երեք հոդված բարձր վարկանիշ ունեցող գիտական ամսագրերում: Մասնակցել է Երևանի ֆիզիկայի ինստիտուտի էլեկտրոնային արագացուցիչի վրա կատարված գիտափորձին և ներկայումս հոդված է պատրաստվում ստացված արդյունքներով:

Որոշեցին. Ատեստավորել Է.Ա. Մելյանին՝ հաշվի առնելով տարվա ընթացքում կատարած աշխատանքի ծավալը և ամբիոնի դրական գնահատականը:

Լսեցին. Միջուկային ֆիզիկայի ամբիոնի ուսումնառության 4-րդ տարվա հեռակա ասպիրանտ Տաթևիկ Ստյոպայի Մելքումյանի ատեստավորման հարցը:

Ելույթ ունեցավ Վ. Ցականովը ներկայացրեց, որ ասպիրանտը մասնակցել է որակավորման պարտադիր և ընտրովի դասընթացներին, հանձնել է ստուգարքներ: Կատարել է նյութում փնջի կլանման երկարության, պլազմայի հիդրոդինամիկ և կինետիկ մոդելների, երկար, կարճ, գերկարճ փնջերի կայունության, փնջի պարամետրերի վրա դրվող սահմանափակումների, արագացվող փնջի դինամիկայի, արտաքին մագնիսական դաշտի բացակայության դեպքում փնջի նկատմամբ պլազմայի ռեակցիայի, փնջերի և պլազմայի փոխազդեցության ռեժիմների, արագացվող փնջերի իոնիզացիոն կորուստների ուսումնասիրություններ:

Որոշեցին. Ատեստավորել Տ.Ս. Մելքումյանին՝ հաշվի առնելով տարվա ընթացքում կատարած աշխատանքի ծավալը և ամբիոնի դրական գնահատականը:

Լսեցին. Օպտիկայի ամբիոնի ուսումնառության 1-ին տարվա հեռակա ասպիրանտ Աննա Էդվարդի Այվազյանի ատեստավորման հարցը:

Ելույթ ունեցավ Ասպիրանտի ղեկավար Լ. Ասլանյանը նշեց, Ա. Այվազյանը, առաջին տարում իր թեմայով իրականացրել է մեծ ծավալի նախապատրաստական աշխատանք, ծանոթանալով ատենախոսության թեմայի արդիական վիճակին, հրապարակել է մեկ աշխատանք:

Որոշեցին. Ատեստավորել Ա.Է. Այվազյանին՝ հաշվի առնելով տարվա ընթացքում կատարած աշխատանքի ծավալը և ամբիոնի դրական գնահատականը:

Լսեցին. Տեսական ֆիզիկայի ամբիոնի ուսումնառության 4-րդ տարվա հեռակա ասպիրանտ Հայկ Գուրգենի Սարգսյանի ատեստավորման հարցը:

Ելույթ ունեցավ Ասպիրանտի գիտական ղեկավար, տեսական ֆիզիկայի ամբիոնի վարիչ Արամ Սահարյանը նշեց, որ հաշվետու ժամանակաշրջանում Հայկ Սարգսյանը ակտիվ աշխատել է թեզի թեմայի վրա: Հրատարակվել են երեք գիտական հոդվածներ:

Որոշեցին. Ատեստավորել Հ.Գ. Սարգսյանին՝ հաշվի առնելով տարվա ընթացքում կատարած աշխատանքի ծավալը և ամբիոնի դրական գնահատականը:

Լսեցին. Տեսական ֆիզիկայի ամբիոնի ուսումնառության 3-րդ տարվա հեռակա ասպիրանտ Հռիփսիմե Կարենի Տերյանի ատեստավորման հարցը:

Ելույթ ունեցավ Ամբիոնի վարիչի տեղակալ Գ. Հարությունյանը նշեց, որ հաշվետու ժամանակաշրջանում Հռիփսիմե Տերյանը մասնակցել է որակավորման պարտադիր և ընտրովի դասընթացներին, հանձնել է ստուգարքներ և հավաքել է բոլոր անհրաժեշտ կրեդիտները: Անցել է գիտամանկավարժական պրակտիկա Ֆիզիկայի Կիրառական Պրոբլեմների Ինստիտուտում: Պատրաստել է ակնարկային հոդված տպագրության հանձնելու համար:

Որոշեցին. Ատեստավորել Հ.Կ. Տերյանին՝ հաշվի առնելով տարվա ընթացքում կատարած աշխատանքի ծավալը և ամբիոնի դրական գնահատականը:

Լսեցին. Օպտիկայի ամբիոնի ուսումնառության 3-րդ տարվա հեռակա ասպիրանտ Շաքե Կարենի Երիցյանի ատեստավորման հարցը:

Ամբիոնի վարիչ Ռ. Ալավերդյանը նշեց, որ Շ. Երիցյանը ատենախոսության թեմայով իրականացրել է բավարար հետազոտություններ և հաշվետու ժամանակահատվածում հրատարակել է 2 աշխատանք:

Որոշեցին. Ատեստավորել Շ.Կ. Երիցյանին՝ հաշվի առնելով տարվա ընթացքում կատարած աշխատանքի ծավալը և ամբիոնի դրական գնահատականը:

Լսեցին. Օպտիկայի ամբիոնի ուսումնառության 3-րդ տարվա հեռակա ասպիրանտ Տաթևիկ Մակիչի Սարուխանյանի ատեստավորման հարցը:

Ամբիոնի վարիչ Ռ.Ալավերդյանը նշեց որ Տ. Սարուխանյանի ատենախոսությունը ըստ էության գտնվում է եզրափակիչ փուլում: Հրատարակված են ԲՈԿ-ի պահանջներին համապատասխանող բավարար հոդվածներ, բացառությամբ անհատական հոդվածի, որը գտնվում է հրատարակման փուլում:

Որոշեցին. Ատեստավորել Տ.Մ. Սարուխանյանին՝ հաշվի առնելով տարվա ընթացքում կատարած աշխատանքի ծավալը և ամբիոնի դրական գնահատականը:

Ֆիզիկայի ֆակուլտետի

Գիտական խորհրդի նախագահ՝



Ռ.Ս. Հակոբյան

Գիտական խորհրդի քարտուղար՝



Գ.Հ. Հովհաննիսյան